

ՈՇՑԻԴԻՎԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գործ ՍԱՀԱԿՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի իստիտուտի հայցորդ*

Հանցավորության կանխումն իրենից ներկայացնում է պետական և հասարակական միջոցառումների համակարգ, որն ուղղված է հանցավորության պատճառ կամ պայման հանդիսացող երևույթների վերացմանը, ազդեցության չեզոքացմանը կամ թուլացմանը: Հայտնի է, որ ընդհանրապես կանխել հանցավորությունը հնարավոր չէ, քանի որ անհնարին է լիովին վերացնել դրա պատճառ կամ պայման հանդիսացող բոլոր երևույթները¹: Առավելագույնը, որ կարելի է անել՝ պետության և հասարակության կողմից սոցիալ-տնտեսական, կազմակերպակառավարչական, գաղափարախոսական, մշակութային և սոցիալ-հոգեբանական ոլորտներում առկա բացասական երևույթների վրա ներազդելն է, ինչը որոշակի շրջանակների մեջ կպահի հանցավորությունը և լավագույն դեպքում կհանգեցնի դրա մակարդակի իջեցմանը: Ինչպես նշում է Վ.Վ. Լունեևը. «Կրիմինալ թակարդից, ուր հայտնվել է ողջ մարդկությունը, կարելի է դուրս գալ միայն հանցավոր վարքագծի վրա սոցիալ-իրավական, քրեաիրավական և կրիմինալոգիական վերահսկողության ուժեղացմամբ և ընդլայնմամբ, ընդ որում, նախապատվությունը պետք է տրվի կրիմինալոգիական վերահսկողությանը, քանի որ վերջինս ամենառադիկալն է և արդյունավետը»²: Հանցավորության պատճառ կամ պայման հանդիսացող երևույթների վրա ազդեցությունը հանդիսանում է հանցավորության կանխման գործընթացի հիմնական մասը՝ թե՛ ծավալով և թե՛ արդյունքներով³:

Մարդն անհատ չի ծնվում, այլ դառնում է սոցիալիզացման ընթացքում: Անձի սոցիալիզացման ընթացքի վրա մեծապես ազդում են հասարակության սոցիալ-տնտեսական վիճակը, ընտանիքը, նրա ուսումնական, աշխատանքային միջավայրը, այլ անձանց հետ ունեցած հարաբերությունները և այլն: Ըստ էության կարելի է փաստել, որ հասարակությունից և հասարակական հարաբերություններից դուրս անհատ չկա, և վերջինիս գործունեությունը, կենսական տարբեր իրավիճակներում վարքագծի այս կամ այն ձևի (այդ թվում և հանցավոր) ընտրությունը վերջ ի վերջո պայմանավորված են այդ հարաբերություններով: Բարոյական նորմերը և կանոնները մարդուն գենետիկորեն չեն փոխանցվում և չեն հանդիսանում կենսաբանական էվոլյուցիայի արդյունք: Դրանք

¹ Տե՛ս Алексеев А.И. Криминология: Курс лекций. М., 1998. էջ 127:

² Տե՛ս Лунеев В.В. Преступность XX века. М., 1997. էջ 475:

³ Տե՛ս Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я.. Криминологическая профилактика: Теория, опыт, проблемы. М., 2001. էջ 4:

սերնդե- սերունդ են անցնում որպես սոցիալական փորձ, որը փոխանցվում է դաստիարակության միջոցով⁴:

Անհատի ձևավորումը սկզբնական փուլերում սերտորեն կապված է վարքագծի նմանակման հետ, երբ վերջինս ընդօրինակում է իր անմիջական միջավայրում առկա վարքագծի ձևերը: Վերջիններս հետագայում կարող են կանխորոշել ինչպես տվյալ անձի բնականոն զարգացումը, այնպես էլ նրա դեգրադացումը, հանրավտանգ գործունեությունը, հանցանքի կատարումը և հանցագործությունների ռեցիդիվը: Անձի հոգեբանական օտարացման և հետագա դեգրադացիայի արագացման կանխարգելումը մեծապես դժվարանում է այն պատճառով, որ այդ երևույթները դետերմինացվում են անձի անհատական, ինտիմ փոխհարաբերություններով իր ընտանիքի ու շրջապատի հետ, և այդ բացասական հարաբերությունների ու գործոնների հայտնաբերումը կապված է անձի մասնավոր կյանք ներթափանցելու հետ:

Փաստորեն ռեցիդիվային հանցավորության կանխմանն ուղղված գործունեությունը շատ հաճախ կարող է շոշափել անձի կարևորագույն (սահմանադրական) իրավունքներն ու ազատությունները⁵, ինչը ներկայիս օրենսդրական կարգավորման պարագայում անիրագործելի է: Այս ամենն առաջ է բերում բավականաչափ մեծ, իսկ երբեմն էլ անհաղթահարելի դժվարություններ, քանզի, չիմանալով, թե ինչ բարդություններ ու պրոբլեմներ են առկա տվյալ անձի կյանքում, դժվար է դրանց դեմ պայքարել և բարոյահոգեբանական ու սոցիալական օգնություն ցուցաբերել նրան: Այս առումով հարկ է կատարելագործել օրենսդրությունն այն հաշվով, որպեսզի կանխարգելիչ գործառույթներ իրականացնող մարմինները կարողանան առավել արդյունավետ հսկողություն իրականացնել հանցածին իրավիճակներում հայտնված անձանց նկատմամբ, անկախ նրանից, թե տվյալ բացասական գործոնները կենսագործունեության որ ոլորտում են առկա: Հույժ կարևոր է, որ այս հարցով զբաղվողները ունենան համապատասխան գիտելիքներ և մասնագիտական հմտություններ, որպեսզի իրոք օգնեն, ոչ թե առավել բարդացնեն անձի կյանքը, խախտեն նրա իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Ցավոք նման մասնագետների թիվն այսօր շատ ավելի քիչ է, քան օգնության կարիք ունեցողներին: Այս է պատճառը, որ, չնայած ներկայիս ծանր տնտեսական իրավիճակին, անհրաժեշտ է ստեղծել հատուկ մասնագիտացված կազմակերպություններ, որտեղ նպատակաուղղված աշխատանք կտարվի օտարացված, դեգրադացված և ընդհանրապես ծանր կենսական կացության մեջ հայտնված անձանց հետ, նրանց կտրամադրի սոցիալական օգնություն և հոգեբանական աջակցություն⁶: Ինչքան էլ դժվար և ծախսատար լինի նման կազմակերպությունների ստեղծումը, այնտեղ մասնագետների ներգրավումը, միևնույնն է, շատ ավելի էժան է, քան նման անձանց կողմից հետագա հակահասարակական գործունեությամբ հասցված հետևանքների վերացումը: Այս առումով հույժ կարևոր և դրական պետք է համարել պրոբացիոն ծառայության

⁴ St'u Дубинин Н. П. Социальное и биологическое в современной проблеме человека. Вопросы философии, 1972, N 10. էջ 51:

⁵ St'u Саркисов Г. С. Объект индивидуального профилактического воздействия в теории предупреждения преступности. Ереван, 1985. էջ 12:

⁶ St'u Артемьев Н.С. Организация борьбы с рецидивной преступностью: Учебное пособие. М., 1997. էջ 55:

ստեղծմանը միտված աշխատանքների կատարումը, որի ներդրումը էապես կարող է նպաստել ռեցիդիվային հանցավորության կանխման գործընթացին:

Ըստ էության, ռեցիդիվային հանցավորության անհատական կանխումը նպատակ ունի հայտնաբերել և չեզոքացնել կոնկրետ անձի կողմից հնարավոր հանցավոր վարքագծի պատճառները, նրա հակահասարակական գործունեությանը նպաստող իրադրությունն ու պայմանները: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների առկայությունը՝ 1) մարդկանց սոցիալական վիճակի և կենսապայմանների բարելավում, նրանց բնականոն զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում, 2) նախկինում հանցանք կատարած անձանց վրա տարբեր հակահասարակական ազդեցությունների չեզոքացում⁷:

Ռեցիդիվային հանցավորության անհատական կանխումը պայմանականորեն կարելի է տարանջատել նախնականի և անմիջականի: Նման տարանջատման համար հիմք է ծառայում այն հանգամանքը, թե ինչքան ժամանակ է «բաժանում» տվյալ անձին հանցանքի կատարումից: Այս առումով խիստ կարևոր է ժամանակին կանխարգելիչ միջոցառումների իրականացումն այն անձանց նկատմամբ, ովքեր դրսևորում են հակահասարակական վարքագիծ⁸: Կոնկրետ անձի կողմից հակահասարակական վարքագիծ դրսևորելու հնարավորության կանխատեսումը թույլ կտա ժամանակին և արդյունավետ ներազդել նրա մոտիվացիոն ոլորտի վրա և հնարավորություն կընձեռի վերջինիս հանցավոր վարքագծի արդյունավետ կանխման համար:

Ռեցիդիվային հանցավորության թե՛ նախնական և թե՛ անմիջական կանխման արդյունավետությունը մեծապես կախված է մի շարք միջոցառումների իրականացումից: Այդ միջոցառումները հիմնականում պետք է հանգեն հետևյալին՝

1. Օտարացված և դեզադապտացված անձանց (այս հոգեբանական առանձնահատկություններով օժտված են նախկինում հանցանք կատարած զրեթե բոլոր անձինք) պետական և հասարակական աջակցության ցուցաբերում, նրանց հետագա ուսուցման, աշխատանքի և հանգստի ճիշտ կազմակերպում:

2. Նախկինում հանցանք կատարած անձանց նկատմամբ դաստիարակչական միջոցառումների իրականացում, նրանց հանրօգուտ և պետականամետ գաղափարախոսության քարոզում:

3. Հակահասարակական կենսակերպ վարող՝ նախկինում հանցանք կատարած անձանց նկատմամբ պետական և հասարակական հսկողության սահմանում, նրանց շրջապատում առկա բացասական գործոնների չեզոքացում:

4. Նախկինում հանցանք կատարած անձանց շրջանում հակահասարակական ուղղվածություն ունեցող ոչ ֆորմալ խմբերի ստեղծման կանխարգելում, նման խմբերի հայտնաբերում և կազմալուծում:

Նման միջոցառումները բազմաթիվ են, և դրանց սպառիչ ցանկը հնարավոր է թվարկել, սակայն դրանք բոլորը պետք է հանգեն նախկինում հանցանք կատարած ան-

⁷ Ст'ю Антонян Ю. М. Психологическое отчуждение личности и преступное поведение, Ереван, 1987, էջ 153:

⁸ Ст'ю Аванесов Г. А. Криминология. 2-е изд.-М. 1984, էջ 403:

ծանց համար հասարակական հարաբերություններում իրենց տեղը գտնելու, նրանց համար ինքնաարտահայտվելու և կյանքում կայանալու հնարավորություններ ստեղծելուն:

Որքան էլ արդյունավետ լինեն պետական այս կամ այն մարմնի կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումները, միևնույնն է, դրանք ուղղված են կոնկրետ անձի կողմից կոնկրետ հանցանքը կատարելու բացառմանը, կրում են անհատական բնույթ և երբևէ չեն կարող ներառել գործողությունների այնպիսի լայն համակարգ, որը հնարավորություն կընձեռի ազդելու ընդհանուր հանցավորության աճի միտումների վրա:

Հանցավորության հիմնական, բազիսային պատճառներն ունեն սոցիալ-տնտեսական բնույթ, և գլխավորապես այդ ոլորտում իրագործված պետական և հասարակական միջոցառումները կարող են դրական արդյունք տալ հանցավորության և հատկապես ռեցիդիվային հանցավորության կանխման գործում: Այս է պատճառը, որ ներկայումս խիստ կարևոր է, որ պետությունը, իրականացնելով իր հիմնական գործառնությունները, որոնք պետք է ուղղված լինեն տնտեսության առավելագույնս արագ զարգացմանը և սոցիալական կոմպրոմիսի (համաձայնության) ապահովմանը, պետք է առաջնային ուշադրություն դարձնի ռեցիդիվային հանցավորության կանխմանն ուղղված սոցիալ-տնտեսական միջոցառումներին:

Ռեցիդիվային հանցավորության կանխման սոցիալ-տնտեսական մեթոդները պետության կողմից իրականացվող այնպիսի միջոցառումներ են, որոնք ապահովում են արտադրության, բաշխման և տնտեսական հարաբերությունների արդյունավետ զարգացումը, դրա հետ մեկտեղ անուղղակիորեն, իսկ երբեմն էլ ուղղակիորեն նպաստում են իրավախախտումների, հանցագործությունների և ընդհանրապես հանցավորության կանխմանը⁹: Սոցիալ-տնտեսական միջոցներով ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարը պետք է ընթանա մի քանի ուղղություններով: Այդ ուղղություններից առաջինը և ամենագլխավորը պետության կողմից այնպիսի քաղաքականության և սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումն է, որոնք կհանգեցնեն տնտեսության աճին, կնպաստեն արտադրության և առևտրի զարգացմանը և՛ երկրի ներսում, և՛ արտաքին տնտեսական հարաբերություններում, ինչը հնարավորություն կընձեռի բավարարել բնակչության օրեցօր աճող պահանջումները և նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ իջեցնել գործազրկության աղետալի չափերի հասնող մակարդակը <<-ում: Նման իրավիճակի ստեղծումը կնպաստի ինչպես ընդհանուր, այնպես էլ ռեցիդիվային հանցավորության մակարդակի իջեցմանը:

Պետության կողմից սոցիալ-տնտեսական մեթոդների կիրառման հաջորդ ուղղությունը, որն անմիջականորեն միտված է ռեցիդիվային հանցավորության կանխմանը, նախկինում հանցանք կատարած անձանց առջև ծառայած կանոնադրյալ կենսական խնդիրների լուծումն է¹⁰: Նման միջոցառումները բազմազան են և կարող են իրագործ-

⁹ Стѣ Римашевская Н.М. Бедность и маргинализация населения // Социологические исследования. 2004. № 4, էջ 50:

¹⁰ Стѣ Андреева Ю.В. Проблемы трудоустройства лиц, освобожденных из мест лишения свободы // Закон и общество: история, проблемы, перспективы: Материалы межвуз. студ. на-уч. конф. Красноярск, 2004, էջ 34:

վել միայն պետության հատուկ քաղաքականության և առանձնակի հոգածության պայմաններում:

Ինչպես նշել ենք, կարևորագույն խնդիր է նախկինում հանցանք կատարած անձանց աշխատանքով ապահովելը, քանզի հանցանքների և այլ հակաիրավական արարքների կատարումը մեծապես պայմանավորված է նրանց ֆինանսական վիճակով: Գործազրկությունը և դրա արդյունքում ֆինանսական միջոցներից, հետևաբար նաև ինքնուրույնությունից զուրկ լինելը անձի մեջ ձևավորում են ֆրուստրացնող հոգեվիճակ, որից ազատվելուն ուղղված գործողությունները հաճախ կարող են հակաիրավական, հանցավոր բնույթ կրել:

Հարկ է նկատել, որ թեև ռեցիդիվային հանցավորության կանխման սոցիալ-տնտեսական մեթոդները ունեն ոչ թե ուղղակի, այլ անուղղակի ազդեցություն, այնուամենայնիվ դրանք ազդում են բուն հանցավորությունը առաջացնող, ծնող հիմնական պատճառների վրա, ինչով էլ պայմանավորված է դրանց մեծ ազդեցությունը և կարևոր նշանակությունը:

Սոցիալ-տնտեսական, դաստիարակչական, գաղափարախոսական մեթոդների հետ միասին՝ ռեցիդիվային հանցավորության կանխման գործում արդյունավետ կիրառվում են նաև պետաիրավական մեթոդները: Վերջիններս պետության կողմից օրենքներում ամրագրված ձևերի և միջոցների ամբողջություն են, որոնց միջոցով իրականացվում է անձի իրավական վիճակին վերաբերող նորմերի անշեղ կատարումը, ապահովվում է իրավահարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագիծը, կանխվում և վերացվում են անձանց իրավունքների և ազատությունների խախտումները: Ռեցիդիվային հանցավորության կանխման պետաիրավական մեթոդները բխում են պետության և հասարակության շահերից, ուղղված են նախկինում հանցանք կատարած անձանց իրավագիտակցության բարձրացմանը, պետությունը և օրենքները հարգելու ոգով դաստիարակելուն¹¹: Այս մեթոդներն ուղղված են թե՛ ընդհանուր և թե՛ մասնավոր կանխարգելմանը և դիալեկտիկապես փոխկապակցված են միմյանց հետ:

Պետության իրավաստեղծ գործունեությունն ուղղված է իրավական համակարգի կատարելագործմանը, նրա համապատասխանեցմանը գործող սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական իրավիճակին: Այս տեսանկյունից իրավական մեթոդների մշակումը ստանում է ունիվերսալ բնույթ, քանի որ միևնույն իրավական մեթոդի միջոցով կարող են կարգավորվել տարբեր հարաբերություններ: Բայց վերջին հաշվով, ինչպես պետական, այնպես էլ իրավական մեթոդները կոչված են միևնույն խնդրի լուծմանը, ինչը կանխորոշում է դրանց ընդհանուր ուղղվածությունը:

Անգնահատելի է իրավունքի կարևորությունը պետության համար, քանզի այն հանդիսանում է պետական մեխանիզմի բնականոն գործունեության հիմքը: Իրավանորմերով են կարգավորվում պետական մարմինների փոխհարաբերությունները, սամանվում են նրանց իրավասությունները, հիերարխիկ և կոորդինացիոն կապերը¹²: Իրավանորմերով են կարգավորվում, օրինակ, այն պետական մարմինների իրավազորությունները,

¹¹ Стів Игошев К. Е. Социальный контроль и профилактика правонарушений. Горкий, 1976, էջ 48:

¹² Стів Теория государства и права. Под ред. М.Н. Марченко. М., 1999, էջ 233:

որոնց վրա դրված է ռեցիդիվային հանցավորության կանխման գործառույթի իրականացումը, և այս կարգավորման արդյունավետությունից է կախված, թե ինչպես կընթանա հանցավորության կանխման ողջ գործընթացը¹³:

Ռեցիդիվային հանցավորության կանխմանն ուղղված միջոցառումները կառավարվում են համապատասխան պետական մարմինների կողմից: Դրանք հիմնականում նպատակ են հետապնդում վերացնելու այն անբարենպաստ և բացասական պայմանները, որոնք առկա են նախկինում հանցանք կատարած անձանց անմիջական շրջապատում և կարող են վերջիններիս կողմից նոր հանցավոր վարքագծի դրսևորման նախապայման հանդիսանալ:

Այսպիսով, կարելի է նշել, որ ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի գործում կառավարումը նպատակաուղղված, գիտականորեն հիմնավորված գործընթաց է, որը կանոնակարգում է նախկինում հանցանք կատարած անձանց շրջանում կանխարգելիչ գործունեություն իրականացնող բազմաթիվ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

Վերջին հաշվով պետք է փաստել, որ հասարակական միջոցառումների համակարգը՝ ուղղված ռեցիդիվային հանցավորության կանխմանը, իր հիմքում ունի դաստիարակչական և կանխարգելիչ մեթոդների ազդեցությունը, որն ուղղված է իրավախախտում թույլ տված կամ հակաօրինական վարքագիծ դրսևորելու հակված անձանց հանցանք կատարելուց հետ պահելուն¹⁴: Այդ ազդեցությունը կարող է իրագործվել նրա հոգեկան աշխարհի, շրջապատող միջավայրում առկա բացասական ազդեցությունների, նրա կողմից հակաիրավական և հակաբարոյական արարք կատարելուն նպաստող պատճառների և պայմանների վերացմանն ուղղված միջոցառումների միջոցով: Այս բացասական ազդեցությունների հետզհետե վերացումն անմիջականորեն կախված է իրականացվող տնտեսական և սոցիալական բարեփոխումներից (որոնք, թերևս, գտնվում են սաղմնային փուլում) և կարող է արդյունավետ իրականացվել միայն սոցիոլոգիայի, կրիմինալոգիայի և այլ գիտությունների կողմից մշակված մեթոդների ու վիճակագրական տվյալների հիման վրա:

Ռեցիդիվային հանցավորության կանխմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն համակարգային բնույթ, և այս համակարգի բոլոր ենթահամակարգերը պետք է անմիջականորեն ու ներդաշնակ կապված լինեն միմյանց հետ: Ռեցիդիվային հանցավորության կանխման միջոցներն ու մեթոդները պետք է լինեն գիտականորեն մշակված և հիմնվեն դաստիարակության գործընթացի օրինաչափությունների վրա: Այս մեթոդների և միջոցների մշակումն ու պրակտիկայում իրականացումը պետք է կրեն էվոլյուցիոն բնույթ: Նոր մեթոդների մշակումը չի բացառում հների կիրառումը: Կիրառությունից պետք է դուրս մղվեն միայն այն մեթոդները, որոնք սպառել են իրենց և չեն կարող նպաստել ռեցիդիվային հանցավորության արդյունավետ կանխարգելմանը:

Ռեցիդիվային հանցավորության կանխման գործում կարևոր նշանակություն է տրվում իրավական մեթոդներին, որոնք անձանց գործունեության տարբեր ձևերի

¹³ Стѹ Алексеев А. И. Криминология: Курс лекций. М., 1998, էջ 127:

¹⁴ Стѹ Дунаев С.А., Токарев А.Ф. Рецидив насильственных преступлений и его предупреждение: Учебное пособие. М., 1999. էջ 43:

նկատմամբ որոշակի ներգործություն են, որն իրագործվում է վարքագծի որոշակի դրսևորումների կարգավորման, ինչպես նաև անձի կողմից որոշակի գործունեությամբ զբաղվելու կամ որոշակի գործողությունների կատարումն արգելելու միջոցով: Իրավունքի կոնկրետ նորմն իրենից ներկայացնում է ոչ միայն վարքագծի տվյալ կանոնի սահմանումը, այլ նաև արտահայտում է պետության և հասարակության կողմից անձին ներկայացվող պահանջները:

Ռեցիդիվային հանցավորության կանխման առավել արդյունավետ մեթոդներ են գաղափարախոսական և դաստիարակչական մեթոդները: Այս մեթոդների ազդեցությունը համընդհանուր է և ուղղված չէ կոնկրետ անձանց խմբին կամ նախկինում հանցանք կատարած կոնկրետ անձին: Նշված մեթոդների արդյունավետությունը այն է, որ դրանք ուղղված են բնակչության և հատկապես նախկինում հանցանք կատարած անձանց կրթական, մշակութային մակարդակի բարձրացմանը, հասարակական կյանքին նրանց առավել ակտիվ մասնակցությանը¹⁵: Նախկինում հանցանք կատարած անձանց կրթական և մշակութային մակարդակի աճը նպաստում է, որ պետությունը հարկադրանքի մեթոդների փոխարեն առավել հաճախ սկսում է կիրառել համոզման և խրախուսման մեթոդները, որոնց արդյունավետությունը շատ ավելի բարձր է: Գաղափարախոսական և դաստիարակչական մեթոդների շնորհիվ պետությունը և հասարակությունը դրականորեն ազդում են նախկինում հանցանք կատարած անձանց գիտակցության, կամքի, զգացմունքների և վարքագծի վրա, որը նպատակ ունի կանխարգելելու նրանց կողմից նոր հանցանքի կատարումը:

ПРЕДУПРЕЖДЕНИЕ РЕЦИДИВНОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Гор САКЯН

Соискатель Института философии, социологии и права НАН РА

Статья посвящена изучению проблем профилактики и предупреждения рецидивной преступности в Республике Армения. Автор тщательно рассматривает причинный комплекс рецидивной преступности в РА, а также условия, которые способствуют росту общей преступности в нашей стране. На основе проведенного исследования автор предлагает систему мер, направленных на эффективное предупреждение рецидивной преступности в Республике Армения. Отмечается, что эти меры достаточно затратны, но они способны предотвратить больший вред.

¹⁵ St'u Иншаков С.М. Культура и ее воздействие на преступность // Преступность и культу-ра. М., 1999, էջ 7:

PREVENTION OF RECIDIVISM IN THE REPUBLIC OF ARMENIA

Gor SAHAKYAN

Post-graduate Student of the Institute of Philosophy, Sociology and Law of the NAS of the RA

The article is devoted to the study of the problems of prevention of recidivism in the Republic of Armenia. The author carefully examines the causal complex of recidivism in RA, as well as the conditions that promote the growth of the general crime level in our country. On the basis of this study the author proposes measures aimed at effective prevention of recidivism in the Republic of Armenia. It is noted that these measures are quite costly, but they can prevent more harm.

Բանալի բառեր – ռեցիդիվային հանցավորություն, հանցավորության կանխում, հանցավորության պատճառ կամ պայման հանդիսացող երևույթներ, սոցիալիզացում, սոցիալական օգնություն, հանցավորության անհատական կանխում, օտարացում, դեզադապտացում, նախկինում հանցանք կատարած անձ

Ключевые слова: рецидивная преступность, предупреждения преступности, причины и условия преступности, социализация, социальная помощь, индивидуальное предупреждение преступности, отчуждение, дезадаптация, личность рецидивного преступника

Key words: recidivism, crime prevention, the causes and conditions of crime, socialization, social assistance, individual crime prevention, alienation, disadaptation, recidivist person